Կարինե ԲԱՂԵՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Առանցքային հիմնախնդիրներից «էթնոս և մշակույթ» թեման գրավում է կենտրոնական տեղերից մեկը, եթե ոչ կենտրոնականը, քանի որ *մշակույթ* հասկացությունը կարևոր դեր է խաղում *էթնոս* հասկացության ձևավորման համար: Սակայն աստիճանաբար մի փոքր անհամապատասխանություն սկսեց առաջ գալ էթնոսի և ազգաբանության հիմնական խնդիրների միջև: Մի կողմից դիտվում է մշակույթի առանձնահատկությունը, որը սովորաբար ներկայացվում է որպես էթնիկական կամ ազգային մշակույթ, մյուս դեպքում մշակույթը հասկացվում է ավելի լայն նշանակությամբ՝ որպես էթնոսի մշակույթ ամբողջությամբ:

Այնուհանդերձ *մշակույթ, էթնոսի մշակույթ և էթնիկական մշակույթ* հասկացությունների հարաբերակցությունը ցավոք դեռևս բավականաչափ հստակ չէ: Ազգաբանները գտնում են, թե մշակույթ ստեղծողները հենց իրենք էթնոսներն են, և մշակույթը գլխավորապես ներկայացվում է էթնիկական շրջանակներում՝ էթնիկական կամ ազգային մշակույթի ձևով:[1] Ընդ որում, էթնոսի մշակույթն իր մեջ ներառում է այն բոլոր արժեքները, որոնք վերաբերում են տվյալ ժողովրդին, յուրացվել են նրա յուրաքանչյուր անդամի կողմից, իսկ էթնիկական մշակույթն ընդգրկում է այն ամենը, ինչ էթնոսը համարում է իրենը, տիպականը:

Այլ դիրք են գրավում փիլիսոփա-մշակութաբանները: Նրանց աշխատություններում մշակույթ հասկացությունը դիտվում է սոցիալ-փիլիսոփայական հարթության վրա՝ հասարակական կյանքի հետ սերտ հարաբերակցության մեջ և թույլ է կապվում էթնոսների կյանքի հետ:[2] Հայկական սովետական հանրագիտարանում մշակույթը դիտվում է որպես համամարդկային և դասակարգային նրևույթ, բայց ոչինչ չի ասվում այն մասին,որ մշակույթն իրենից ներկայացնում է էթնիկական երևույթ, չնայած նշվում է տարբեր ազգերի «մշակույթի ձևերի բազմազանությունը»:[3]

Ազգաբանների, փիլիսոփաների ու արվեստաբանների մեջ գոյություն ունեցող այս տարակարծությունը գալիս է նրանից, որ նրանք տարբեր պատկերացում ունեն մշակույթ հասկացության վերաբերյալ: Ազգաբանները գտնում են, որ *էթնոս-մշակույթ* հարաբերակցության մեջ դոմինանտ դերը պատկանում է էթնոսին, իսկ փիլիսոփաները՝ հասարակությանը, իր սոցիալ-դասային բաժանումներով հանդերձ: Տարակարծություն չկա միայն մի հարցում, այն որ մշակույթը ստեղծում և սպառում են մարդիկ, որոնք որպես սոցիալական գոյացություններ խմբավորվում են այս կամ այն հասարակության ընդերքում: Պետք է նշել, որ եթե փիլիսոփաների և մշակութաբանների համար առաջին պլանում գտնվում է մշակույթի ընդհանրական գաղափարը, ապա ազգաբանները գործ ունեն մշակույթի կոնկրետ դրսևորումների հետ կյանքի նյութական կամ հոգևոր բնագավառում: Ընդ որում կարևոր է նկատի ունենալ, որ նյութական և հոգևոր կյանքի պահանջների բավարարումը իրենից ներկայացնում է միասնական պրոցես, որի իրականացման ընթացքում նյութական մշակույթի տարրերը հաճախ կատարում են հոգևոր մշակույթի գործառույթներ և ընդհակառակը:[4]

Անդրադառնալով հոգևոր մշակույթին՝ պետք է ասել, որ նրանում էթնիկական գիծը ավելի ուժեղ ու ցայտուն է արտահայտված: Դա բացատրվում է հոգևոր մշակույթի մի քանի տարրերի կապով էթնիկական ինքնագիտակցության հետ: Հայկական ժո-

---

[1] *Բ. Կ ո զ ա ն ո վ, Этнос и культура, Советская этнография, 1979, № 3. Так же, Методологические проблемы исследования этнических культур, Материалы симпозиума, Ер., 1978.*

[2] *Է. Մ ա ր կ ա ր յ ա ն, Очерки теории культуры, Ер. 1969; его же, Теория культуры в системе общественных наук, Известия Северо-кавказского центра высшей школы, Общественные науки, 1976, № 3.*

[3] *Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Եր., 1981, էջ 656:*

[4] *Культура жизнеобеспечения и этнос, Ер., 1983, стр. 37.*

ղովրդական երգերը և ավանդական ընտանեկան սովորությունները, օրինակ, բացահայտորեն տարբերվում են ռուսականից և այդպիսի տարբերությունները հեշտ է նկատել նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց կատարողները հագնում են նույնածև հագուստ և ապրում նույնատիպ բնակարաններում: Սակայն հոգևոր մշակույթի էթնիկական բազմազանությունը և յուրօրինակությունը բացահայտելն ավելի բարդ է, որովհետև հոգևոր մշակույթն ավելի դժվար է վերլուծության ենթարկվում, քան նյութականը:

Էթնիկական մշակույթի համակարգում իր որոշակի տեղն ունի նաև ժողովրդական ստեղծագործությունը, որը յուրաքանչյուր էթնոսի՝ կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի արտահայտությունն է: Այն տարբեր կերպ է արտահայտվել զանազան բնագավառներում,հոգևոր մշակույթում՝ բանահյուսության, երաժշտության և պարերի մեջ, նյութականում՝կիրառական-գեղազարդման արվեստի բազմազան տեսակներում՝ զարմանահրաշ զարդանախշերով ու զարդահորինվածքներով: Ժողովրդական արվեստը, ինչպես ժողովրդի ստեղծագործության և ոչ մի տեսակ, կարողացել է մինչև մեր օրերը հասցնել մեր նախնիների հնագույն աշխարհընկալման արձագանքները, նրանց միջավայրում կազմավորված գեղագիտական չափորոշիչների համակարգը, առասպելական զգացմունքները, որոնք մեզ տանում են դեպի մանկության հեքիաթային աշխարհը: Այդ է պատճառը, որ մասնագետները ժողովրդական արվեստը համարում են էթնիկական ինքնագիտակցության ձևերից մեկը:[5] Ժողովրդական արվեստ ստեղծագործություն է, որը սահմանվում է պատմական հիշողությամբ: Ինչպես տոհմական հիշողությունը, որն արտահայտվում է կենդանի կերպարներում, այն կապում է ներկան ժողովրդի մշակութային անցյալի հետ:[6] Ժողովրդական արվեստը հաստատագրվում է մշակույթի մեջ ոչ թե անհատական-սուբյեկտիվ, այլ հոգևոր-արժեքային բովանդակությամբ, ձևավորվում է կոլեկտիվ ակունքներից, որովհետև ճանաչողական է, պատմական և հոգևոր, բարոյական և ազգային-հոգեբանական որակներում:[7] Ժողովրդական կիրառական արվեստը սերտորեն կապված է նյութական մշակույթի, մասնավորապես կենցաղային առարկաների հետ, որի պատճառով այն հաճախ անվանում են կենցաղային մշակույթ:[8] Միաժամանակ այն արտահայտում է ժողովրդի հոգևոր կյանքը, դրանում դրսևորվում են նրա իդեալները, պատկերացումները բարու մասին, գեղեցիկի նկատմամբ երազանքները: Գեղագիտական գործառույթները դրանում ձուլվում են կենցաղայինի հետ: Ժողովրդական կիրառական արվեստի երկակի բնույթը, կապված մի կողմից նյութական արտադրության, մյուս կողմից հոգևոր մշակույթի հետ, բարդություն է ստեղծում դրա ուսումնասիրության մեթոդներում: Ժողովրդական արվեստն ուսումնասիրելիս մասնագետը նախ և առաջ գործ ունի իրի հետ՝ կոնկրետ ստեղծագործության, որն ունի անկրկնելի գեղարվեստական առանձնահատկություններ, որոնք համապատասխանում են գործառույթային, էթնիկական, ժամանակագրական և այլ բնութագրումներ: Ժողովրդական արվեստը բազմաթիվ թելերով կապված է իրականության տարբեր կողմերի հետ: Մի կողմից այդ կապերը մակերեսային են, տեսանելի, մյուս կողմից՝ միջնորդավորված են, և առաջին հայացքից չեն ցուցաբերում համաղորության բացահայտ կողմեր: Սակայն դրանք կարող են դուրս բերվել հատուկ վերլուծություն կատարելով, հակառակ դեպքում մենք աղքատիկ, կամ ոչ ճիշտ կարող ենք ներկայացնել ժողովրդական արվեստի դերը, նշանակությունը և գործառույթները:[9]

Ի տարբերություն պրոֆեսիոնալ կիրառական արվեստի, որը զարգանում է ոչ թե էթնիկական ավանդույթի շրջանակներում, այլ տեղային ոճերի ու նորաձևության, ժողովրդական արվեստը զարգանում է իր ճանապարհով: Վերջինս հանդիսանում է իր ստեղծողների աշխարհընկալման արտահայտությունը, ոչ թե մեկ ստեղծագործողի, այլ բոլորի, և ոչ միայն նրանց, այլ նաև «սպառողի»՝ ժողովրդական զանգվածների, այ-

---

[5] *С. Рождественская, Русская народная художественная традиция в современном обществе, М., 1981, стр. 196.*

[6] *Н. Некрасова, Народное исскуство как часть культуры, М., 1983, стр. 7.*

[7] *Նույն տեղում, էջ 8:*

[8] *Г. Маслова, К методике полевого изучения орнамента; Полевые исследования института этнографии, М., 1979, стр 235.*

[9] *Ю. Анчабадзе, Народное искусство в современном обществе, СЭ., 1987, № 4, стр. 38-48.*

սինքն էթնոսի՝ իր պատմության ընթացքում: Ի տարբերություն գեղարվեստի ցանկացած տեսակի, այսինքն՝ պրոֆեսիոնալ արվեստի, որի ֆունկցիան է արտահայտել նկարչի՝ որպես անհատի աշխարհընկալումը, ժողովրդական արվեստը իր կիրառական գեղագարդման ձևով արտացոլում է ժողովրդի աշխարհայացքը:[10] Ժողովրդական դեկորատիվ արվեստը ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլև ձևափոխում է այն՝ բարձրացնելով շրջապատող միջավայրի գեղագիտական արժեքը: Այն կենցաղ է ներմուծում հատուկ ոգի, ինչը կապված է այն բանի հետ, որ ի տարբերություն պրոֆեսիոնալ արվեստում նկարիչների ինքնարտահայտման անհատական սկզբունքի, ժողովրդական արվեստն իր կոլեկտիվ ակունքներով արտահայտում է էթնոսի դարերով խտացած հոգևոր էությունը իր էթնոհոգեբանական կերպի առանձնահատկություններով: Հենց այդ պատճառով պրոֆեսիոնալ մշակույթում կրկնությունը համարվում է բանագողություն (պլագիատ),իսկ ժողովրդական արվեստում այն պարտադիր է՝ էթնոսի հոգևոր գեղարվեստական արժեքների պահպանման համար:[11] Ընդհանուր առմամբ ժողովրդական արվեստը մի շարք տարբերություններ է դրսևորում պրոֆեսիոնալ արվեստի նկատմամբ:

Առաջին տարբերությունն այն է, որ ժողովրդական արվեստում անհատն իր սուբյեկտիվ ընկալմամբ ներթափանցվում է ընդհանուրի մեջ: Սուբյեկտիվ-անհատականը դրսևորվում է որոշակի պատմաազգագրական շրջանին բնորոշ ժողովրդական արվեստի դպրոցների միջոցով, որոնց պատկանում է անհատի ստեղծագործությունը: Դպրոցների ձևավորմամբ պայմանավորված է ժողովրդական արվեստի ժառանգորդությունը: Դպրոցներում ավանդույթով ամրագրված կոլեկտիվ-պատմական փորձը միաձուլվում է տվյալ պատմաազգագրական մարզի կենցաղի ու մշակույթի տեղային հատկանիշների ամբողջության հետ:

Հաջորդ տարբերությունը ժողովրդական արվեստի խիստ կանոնակարգվածությունն է: Ժողովրդական արվեստն իր զարգացման մեջ որպես կողմնորոշիչ ունի ավանդույթը: Ավանդական են ստեղծագործության հիմնական կերպարները, սյուժեն, թեման, գեղագարդման եղանակները, տեխնիկան և այլն: Ժողովրդական արվեստը կրում է էթնիկ բնավորության խտացված ձևերը: Հազարամյակների ընթացքում անցնելով զարգացման բարդ ուղի, ազդվելով այլէթնիկ մշակույթներից, միաժամանակ փոխադարձաբար ներազդելով դրանց վրա, այն հասել է մեզ՝հիմնականում պահպանելով ազգային ինքնատիպ նկարագիրը: Այն տարբերվում է նաև իր համամարդկային բնույթով, որը գալիս է նրա հնագույն արմատներից. ժողովրդական արվեստը հասկանալի է բոլոր ժամանակներում և բոլոր էթնիկական ընդհանրություններին: Այս առումով նրա կերպարների լեզուն համընդհանրական է: Անվերջը նրանում հակադրվում է վերջավորին, ժամանակավորին:[12]

Ժողովրդական մշակույթի մյուս տարբերությունը կայանում է նրա հանրային էության մեջ: Կոլեկտիվ սկիզբը ժողովրդական արվեստի մեջ արտահայտվում է ոչ միայն նրանում, որ մեկ գեղարվեստական համակարգում կարող է աշխատել հանրույթը, այլ որ առավել կարևոր է, նրանում, որ արվեստը զարգանում է խմբային եղանակով, յուրաքանչյուր կերպար հդկվում է ժամանակի մեջ՝ դառնալով տիպ-կերպար: Այսպիսով, ժառանգորդությանը պայմանավորում է մշակույթի բոլոր ոլորտները, բայց ժողովրդական մշակույթում այն դրսևորվում է կայունության հատուկ որակներով: Կայունությունը բնորոշում է ստեղծագործության կառուցվածքը, դառնում է ժողովրդական մշակույթի, որպես գեղարվեստական տիպի սկզբունք: Չպետք է մոռանալ, որ անցյալից ներկա փոխանցվող ավանդույթները յուրաքանչյուր հասարակության կարևորագույն գործող բաղադրիչներն են:[13] Ժողովրդական արվեստում վառ արտահայտվում է էթնոսի գեղարվեստական ավանդույթը, որը ձևավորվել է արվեստի բազմադարյան զարգացման ընթացքում: Այդ պատճառով կայուն կերպարներում, հորինվածքներում, ոճավորման եղանակներում, գունային լուծումներում դիտարկվում են արխայիկ շեր-

---

[10] *С. Рождественская, Русская народная художественная традиция в современном обществе, М., 1981, стр. 185.*

[11] *Նույնը:*

[12] *Н. Некрасова, նշվ. աշխ., էջ 63-64:*

[13] *Ю. Бромлей, Этнос и этнография, М., 1973, стр. 69.*

տեր, որոնք արտահայտում են մարդկանց վաղնջական պատկերացումները աշխարհի մասին, ինչպես նաև ավելի ուշ ժամանակաշրջանների շերտեր և գեղարվեստի զարգացման արդիական տենդենցներ: Այդպիսով, կիրառական գեղագիտական արվեստը դառնում է պատմական տարբեր դարաշրջանների «շերտերի» բազմահամադրություն, որն արտահայտվում է զարդանախշերում և զարդահորինվածքներում:[14] Զարդանախշերն են հենց արտացոլում ժողովրդի առօրյա կյանքի, կենցաղի, մշակույթի բնորոշ գծերը, դրանցում են դրսևորվում տարբեր պատմաազգագրական մարգերի առանձնահատկությունները:Ժողովրդական կիրառական արվեստի զարգացման վրա մեծապես ազդում են սոցիալ-տնտեսական գործընթացները, առանձին կենտրոնների կոնկրետ տնտեսական պայմանները, որոնցից, ինչպես նաև բնակչության տարբեր խավերի կենցաղում կատարված փոփոխություններից էր կախված դրանց ճակատագիրն առավել, քան ժողովրդական արվեստի այլ ճյուղերինը (օր. բանահյուսությունը): Գեղարվեստի փոխակերպման վրա ազդում են մի քանի գործոններ, որոնցից առաջինը անհատի ստեղծագործական, հոգեբանական ունակությունն է: Անհատը գիտակցված կամ անգիտակից ձևով փոփոխություն է մտցնում ստեղծագործության մեջ:Այս առումով կարևոր են վարպետների սեռային և տարիքային հատկանիշները, սոցիալական պատկանելությունը: Երկրորդ գործոնը դա բնական կամ աշխարհագրական միջավայրն է, որն իր կնիքն է դնում գեղարվեստական իրերի նյութի, տեխնիկայի և զարդանախշերի վրա: Երրորդը ժամանակագրական գործոնն է: Ժողովրդական արվեստի նմուշներում դրսևորվում են էթնիկական ընդհանրության պատմական զարգացման որոշակի ժամանակաշրջանի կենցաղն ու մշակույթը, աշխարհընկալումն ու ճաշակը: Հաջորդ ոչ պակաս կարևոր գործոնը սոցիալական կոնկրետ միջավայրի, դասային խմբերի ազդեցությունն է:Բոլոր փոխակերպումներով հանդերձ ժողովրդական արվեստում անխախտ է մնում գեղարվեստական ավանդույթը, որը սերնդեսերունդ փոխանցվող գեղագիտական կատարելության գանձարան է: Այս փոխանցման ընթացքում դուրս էին շպրտվում ժողովրդի աշխարհընկալման չհաջողված գեղարվեստական մարմնավորումները: Ավանդույթը կայուն և միաժամանակ փոփոխվող արտահայտչամիջոցների մի համալիր է, որի զարգացման ընթացքում կայունության և փոփոխականության այդ միասնությունը ապահովվում է նրանով, որ ավանդական արտահայտչամիջոցները երբեք միաժամանակ չեն փոխվում: Ինչ որ ժամանակաշրջանում կալող է փոխվել, օրինակ, առանձին վերցված կերպարը կամ կոմպոզիցիան, բայց մնացածները պահպանվում են անփոփոխ և. քանի որ այդ համալիրը առանձին բաղադրամասերի մեխանիկական համախմբում չէ, այլ որոշակի կառուցվածք, որի տարրերն ամուր, օրգանապես կապված են իրար հետ, ապա տեղի է ունենում տվյալ պահին փոփոխվող համալիրի յուրաքանչյուր տարրի աղապտացիայի գործընթաց: Լինելով այդտեղ այդ նորացված տարրը ձեռք է բերում ոճական ընդհանրություն ավանդույթի մյուս արտահայտչամիջոցների հետ: Ավանդույթի կայունության և դինամիզմի կարգավորման այս մեխանիզմը ապահովում է զարգացման ընթացում նրա դիմացկունությունը որպես «ինքնավերականգնվող» և «ինքնակարգավորվող» համակարգի:

Ժողովրդական արվեստի, ինչպես և մշակույթի մյուս բնագավառների, որպես ազգագրական նյութի, յուրահատկությունը կայանում է նրանում, որ նրանց առարկայական դրսևորումները գոյություն չունեն իրենք իրենց համար, դրանք ապրում են էթնիկական մշակույթի ընդերքում: Ինչպես կահկարասին, բանահյուսական սյուժեները, աշխատանքային գործիքներն ու ծեսերը, գեղարվեստական իրերը ևս շրջապատված են սովորույթներով և կլում են զարգացման ժառանգորդության կնիքը: Առանց դիմելու ժողովրդական միջավայրին՝որպես ազգագրական երևույթների կենսագործունեության գլխավոր պայմանի, ցանկացած տիպաբանական մոտեցում դառնում է ձևական և ոչ թե բովանդակային: Տիպաբանությունը, ընդգրկելով ոչ միայն այն հատկանիշները, որոնք բնութագրում են առարկան ինքնին, այլ, որ առավել կարևոր է, նրա կենցաղավարման պայմանները, դուրս է բերում տվյալ առարկան նմանատիպ երևույթների

[14] *Г. Маслова, նշվ. աշխ., էջ 237:*

շրջանակից:[15] Ժողովրդական արվեստը էթնոսի կենցաղում ու մշակույթում այս սկզբունքով դիտարկելիս պարզվում է, որ այն կատարում է մի քանի գործառույթ: Առաջին հերթին դա առօրյա-կենցաղային գործառույթն է, որովհետև գեղարվեստի յուրաքանչյուր առարկա մինչև օրս կենցաղի անհրաժեշտ մասն է կազմում: Ժողովրդական արվեստը թափանցել էր ավանդական գյուղական և քաղաքային կենցաղի բոլոր ոլորտները: Գեղազարդված իրերը երբեմն աչք զարնող չեն, դրանք հարկավ չէին ստեղծվում ցուցադրության համար: Առտնին կյանքում այդ իրերը կարծես շնչավորում էին գյուղական և քաղաքային միապաղաղ կենցաղը: Ժողովրդական արվեստի վերոհիշյալ գործառույթի մասին հիշատակում են շատ ուսումնասիրողներ (Ս. Ռոժդեստվենսկայա, Գ.Մասլովա, Յու. Անչաբաձե և այլք):

Ժողովրդական արվեստի սոցիալական գլխավոր գործառույթը կարելի է սահմանել որպես գեղարվեստական-գեղագիտական, քանի որ այն խնդիր ունի զարդարել, գեղեցկացնել բնակարանի ներսույթը, իրերը, հագուստը, շրջապատը: Կիրառական գեղազարդման արվեստի նմուշները ժողովրդին տալիս էին այնպիսի հոգևոր հագեցում, որը միևնույնն է ինչ բարձր այվեստի հետ շփումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժողովրդական արվեստը կերպարների ու հորինվածքների միջոցով էթնոսի աշխարհընկալումն արտահայտող համակարգ է, ապա դրա հետ հարաբերակցությունը ժողովրդին հաղորդում էր գեղագիտական ճաշակ, հոգևոր էություն, ինչը շատ կարևոր էր հատկապես գյուղական ծանր ու բազմագբաղ կենցաղում: Արվեստի առարկաների շրջապատում ապրելը հնարավորություն էր տալիս ստեղծել բարձր զգացմունքների և զգացողությունների այն հարուստ երանգապնակը, որն օգնում էր պահպանել սեփական արժանապատվության զգացումը և ինքնահարգանքը անընդհատ ճնշումների և օտար տիրապետության տակ ապրող ժողովրդի մեջ: Իր գեղազարդող գործառույթով ժողովրդական կիրառական արվեստը տարբերվում է ժողովրդական ստեղծագործության մյուս տեսակներից: Այն հանդիսանում է կենցաղի կայուն տարր, որի հետ կապված դրա կերպարների և սյուժեների զգայական շրջանակը մի փոքր այլ կառուցվածք ունի, քան տարածքային-ժամանակային արվեստները: Արվեստի միջոցով իրականությունն արտահայտելու ժողովրդական ստեղծագործության ընդհանուր խնդրի հետ միաժամանակ ժողովրդական արվեստն ունի միջավայրը վերափոխելու գործառույթ, այն դեպքում, երբ բանահյուսության և ժողովրդական ստեղծագործության մյուս տեսակների համար, որոնք վերաբերում են տարածքային տիպերին, այդ գործառույթը դիպվածային է և բխում է կոնկրետ իրադրությունից:[16] Բանահյուսական ստեղծագործությունը հնչում է որոշակի պահի՝ լսարանի տրամադրության համապատասխան: Դեկորատիվ արվեստի ստեղծագործությունները կենցաղում կայուն ու հաստատուն գոյություն ունեն՝ անկախ «նրա ներկայությամբ» փոփոխվող կենսական իրավիճակներից (ուրախություններ, դժբախտություններ, աղետներ կամ սոցիալական այլևայլ ցնցումներ): Որոշակիորեն կարելի է պնդել, որ ժողովրդի կենցաղը հաստատուն ձևով զարդարել կարող էին միայն դեկորատիվ արվեստի ստեղծագործությունները, որոնց հորինվածքները արտահայտում էին ուրախության, երջանկության և բարեկեցության վիճակներ: Դժբախտության մեջ դրանք կարող էին հույս ճառագել, հավատ ներշնչել, իսկ ուրախության ժամանակ լրացնել երջանիկ կյանքի տվյալ պահի տոնականությունը: Լայն առումով (իրենց ձևավորման ակունքներում) ժողովրդական ստեղծագործության բոլոր տեսակները միասնական են, քանի որ դրանք բավարարում են մարդու ստեղծագործելու պահանջները և խթանվում են որպես մի գործոն, որն ապահովում է դրանց կենսագործունեությունը մարդու գեղագիտական կարիքներին համապատասխան: Դրանք դրված են մարդկային բնության մեջ, դեպի գեղեցիկը ձգտումի բնածին պահանջի մեջ, որն ուղղակիորեն բխում է նյարդային համակարգից, ինչը հաստատում են բնագիտական վերջին հետազոտությունները:[17]

---

[15] *Я. Чеснов, О принципах типологии традиционно-бытовой культуры, Проблемы типологии в этнографии, М., 1979, стр. 191.*

[16] *С. Рождественская, նշվ. աշխ., էջ 195.*

[17] *М. Афасижев, Эстетические проблемы эпохи научно-технической революции, М., 1975, стр. 45.*

Ժողովրդական արվեստի մյուս գործառույթը տոնա-ծիսականն է, քանի որ ժողովրդական ստեղծագործության և կիրառական-գեղարվեստի շատ նմուշներ ու հստակապես դրանց զարդանախշերն ու զարդահորինվածքները կապված են հավատալիքների, ծեսերի ու սովորույթների որոշակի համակարգերի հետ: Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ զարդանախշված իրն ինքնին ունի առանձնահատուկ հնչեղություն, իսկ զարդամոտիվների որոշակի տեղադրվածությունն ու բնույթը ուրվագծում են տվյալ իրի ծիսական կիրարկման ոլորտը:[18] Ժողովրդական արվեստի բովանդակությունը ներառում է ստեղծագործության միայն տվյալ տեսակին հատուկ կերպավորման և արտահայտչական միջոցներ, գեղարվեստական պատկերավոր մտածողության մարմնավորումներ: Նյութական մշակույթի առարկաների ավանդական գեղազարդման մեջ անցյալում առաջանում էին արտադրողական հմտություններ, նյութի վերամշակման տեխնիկական եղանակներ, աշխատանքային գործիքների զարգացման որոշակի մակարդակ, ինչը նույնպես անքաժան է ժողովրդական արվեստի բովանդակությունից: Ինչպես և ժողովրդական ստեղծագործության մյուս տեսակներում (բանահյուսություն, երաժշտություն, պար) դրա հիմքը կազմում է ժողովրդի աշխարհընկալումը, աշխարհայացքը և աշխարհզգացողությունը: Ժողովրդական գեղարվեստական ավանդույթը, որը միավորում է ժողովրդական արվեստի բոլոր տեսակները ինչպես ստեղծագործության, այնպես էլ ընկալման մակարդակում, հանդիսանում է էթնիկական ինքնագիտակցության ձևերից մեկը ճիշտ այնպես, ինչպես արվեստն ամբողջությամբ հանդիսանում է հասարակական գիտակցության ձևերից մեկը: Լինելով որոշակի էթնիկական ընդհանրության հասարակական գիտակցության ձևերից մեկը, այն ներկայացնում է գեղագիտական արժեքների մի համակարգ, որտեղ արտացոլվում է ժողովրդի էթնիկ պատմությունը: Ժողովրդական կիրառական գեղազարդման արվեստը, իր զարդարվեստով՝ որպես էթնիկական մշակույթի բնութագրական տարրերից մեկը, դառնում է «էթնիկական նշան», որով տվյալ էթնոսը ներկայանում է ողջ աշխարհին և տարբերում իրեն մյուսներից:

Ժողովրդական արվեստի հաջորդ գործառույթը դա կոմունիկատիվությունն է՝ փոխադարձ շփումը: Սրա շնորհիվ ժողովրդական արվեստը դառնում է այն ուղին, որը հնարավորություն է տալիս երկրագնդի ժողովուրդներին ճանաչելու իրար, հասկանալու հարևանների հոգեբանությունը, նրա աշխարհայեցողությունը, էթնիկական իդեալները և ձգտումները: Ժողովրդական արվեստը որպես պատկերավոր մտածողության համակարգ, որն արտացոլում է աշխարհը և իրականությունը, ակտիվորեն ազդում է հայրենասիրության, ինտերնացիոնալիզմի և հումանիզմի դաստիարակությունն գործընթացների վրա: Դրանում է կայանում ժողովրդական արվեստի կարևորագույն դերը՝ ժամանակակից հասարակությունում մարդու աշխարհընկալման, նրա հասարակական գիտակցության ձևավորման գործում:

НАРОДНОЕ ИСКУССТВО В СИСТЕМЕ ЭТНИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ

Резюме *К. Базеян*

Народное искусство имеет неповторимые художественные особенности, которые соответствуют функциональным, этническим, хронологическим и другим характеристикам. В статье рассматривается народное искусство как особое этническое явление, где соединяются художественные, культурные, исторические аспекты. Выделяются характерные особенности народного творчества как одного из видов народного творчества, представляются различия между народным и профессиональным изобразительным искусством. Народное декоративно-прикладное искусство определяется несколькими функциями (утилитарной, празднично-обрядовой, ритуальной, эстетической, коммуникативной и этнознаковой), которые по отдельности рассматриваются в статье.

---

[18] *Ա. Ստեփանյան, Հայ ժողովրդական տարազի զարդանախշերի խորհրդիմաստը, ատենախոսության սեղմագիր, Եր., 1996, էջ 3:*